Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
դեկտեմբերի 27-ի N 1281 որոշմամբ

ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2002 թվականի

I. Ծրագրի մշակման հիմքերը

Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության (**ՓՄՁ**) զարգացման 2002 թվականի պետական ծրագրի (այսուհետև՝ **ծրագիր**) մշակման և իրականացման հիմքը «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն է:

Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել նաև՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագիրը,

բ) Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2001 թվականի պետական ծրագիրը,

գ) «Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթները»,

դ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի բյուջետային ուղերձը,

ե) Հայաստանի Հանրապետության 2002 թվականի պետական բյուջեն:

II. Ծրագրի խնդիրները

Ծրագրի խնդիրներն են՝

ա) ՓՄՁ-ի սուբյեկտների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծումը և զարգացումը,

բ) ՓՄՁ-ի սուբյեկտների արտաքին տնտեսական գործունեության ընդլայնումը և արտահանման խթանումը,

գ) իրավական դաշտի հետագա բարելավումը,

դ) ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսական և ներդրումային աջակցության հնարավորությունների ընդլայնումը,

ե) ՓՄՁ-ի սուբյեկտների վիճակագրության վարումը,

զ) ՓՄՁ-ի սուբյեկտներին անհրաժեշտ տեղեկատվական և խորհրդատվական ծառայություններից, ուսուցողական և կադրերի վերապատրաստման համակարգի ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովումը:

III. Ծրագրային միջոցառումների համակարգը

2002 թվականի համար նախատեսված ծրագրային միջոցառումների համակարգն ընդգրկում է ՓՄՁ-ի ոլորտի զարգացման և պետական աջակցության հետևյալ հիմնական ուղղությունները.

1. ՓՄՁ-ի զարգացման ազգային կենտրոնի հիմնադրումը

Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ-ի պետական քաղաքականության և ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման համար կհիմնադրվի «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» ոչ առևտրային կազմակերպություն՝ իրավաբանական անձի կարգավիճակով (այսուհետև՝ կենտրոն): Կենտրոնը կունենա հիմնադրամի կարգավիճակ:

Կենտրոնը կմասնակցի պետության կողմից իրականացվող ՓՄՁ-ի ոլորտի համակարգման ու կարգավորման գործընթացներին՝ համապատասխան առաջարկություններ ներկայացնելով Հայաստանի Հանրապետության կառավարություն:

Հաշվի առնելով առկա հնարավորությունները՝ սկզբնական փուլում կենտրոնի գործունեությունը հիմնականում կուղղվի խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունների դաշտի ընդլայնմանը, կրթական ծրագրերի մշակմանը:

Բանակցություններ կվարվեն միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ (Համաշխարհային Բանկ (WB), Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն (JICA), Գերմանիայի տեխնիկական համագործակցության գործակալություն (GTZ), Հունաստանի զարգացման նախարարություն և այլն)՝ 2002 թվականին և հետագայում համատեղ ծրագրերի իրականացման նպատակով: Դրանք Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ-ի զարգացման պետական քաղաքականության և տարեկան ծրագրերի մասը կկազմեն:

Կենտրոնը կիրականացնի «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսական և ներդրումային աջակցությունը, երաշխիքների տրամադրումը:

ՓՄՁ-ի ոլորտում կհիմնադրվեն կենտրոնի մասնաճյուղեր Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային քաղաքականությունն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով:

2. ՓՄՁ-ի տեղեկատվական և խորհրդատվական ապահովումը

Պետական կառավարման մարմինները, բիզնես-աջակցող կառույցները և ՓՄՁ-ի սուբյեկտները պետք է ապահովվեն համապատասխան տեղեկատվությամբ և խորհրդատվությամբ:

Կենտրոնի աջակցությամբ նախատեսվում է ՓՄՁ-ի սուբյեկտներին խորհրդատվական ծառայությունների մատուցում հետևյալ ուղղություններով՝

իրավական,

ընկերությունների կառավարման,

ֆինանսական/վարկային և ներդրումային,

շուկաների (ներքին և արտաքին) ուսումնասիրման,

գործարար ծրագրերի կազմման,

որակի կառավարման,

այլ խորհրդատվական ծառայություններ:

Ձեռնարկությունների արդյունավետ գործունեության ապահովման համար անհրաժեշտ է օպերատիվ տեղեկատվություն Հայաստանում արդեն իսկ գործող միջազգային ծրագրերի վերաբերյալ, որոնք աջակցում են ՓՄՁ-ի սուբյեկտներին իրենց գործունեության տարբեր բնագավառներում:

Ծրագրով կենտրոնի կողմից՝

կիրականացվեն աշխատանքներ գործող տեղեկատվական համակարգերում Հայաստանի Հանրապետության ՓՄՁ-ի սուբյեկտներին ներկայացնելու և այդ համակարգերի տեղեկատվությունը նրանց տրամադրելու ուղղությամբ,

կհրատարակվի ՓՄՁ-ին աջակցող և ծառայություններ մատուցող կազմակերպությունների ու ծրագրերի տեղեկագիր:

3. ՓՄՁ-ների վիճակագրությունը

ՓՄՁ-ի սուբյեկտները յուրաքանչյուր երկրի տնտեսական և սոցիալական կայունության հիմնական երաշխիքն են: Սակայն դրանց ազդեցությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման վրա դժվար է գնահատել առանց այդ ոլորտի առանձնացված վիճակագրական հաշվառման: Նման վիճակագրական տեղեկատվության առկայությունը հնարավորություն կընձեռի ոչ միայն գնահատել ոլորտի դերը երկրի տնտեսական և սոցիալական զարգացման գործում, այլ նաև հաշվի առնել այդ տվյալները ոլորտի զարգացման և աջակցման պետական ծրագրեր մշակելիս:

Նախատեսվում է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից ՓՄՁ-ի սուբյեկտների վիճակագրության վարման նախապատրաստում: Աշխատանքներ կիրականացվեն վիճակագրության վարման գործընթացը և դրա շարունակականությունն ապահովելու համար:

IV. Ծրագրի իրականացման սկզբունքները

Հայաստանում ՓՄՁ-ի զարգացման 2002 թվականի պետական ծրագիրն իրականացվում է սույն ծրագրով նախատեսված ՓՄՁ-ին աջակցող կառույցների միջոցով.

1. Նպատակային ենթածրագրերը մշակվում են Հայաստանի Հանրապետության արդյունաբերության և առևտրի նախարարության կողմից՝ համապատասխան այլ պետական մարմինների և նոր ստեղծվող ՓՄՁ-ի զարգացման ազգային կենտրոնի մասնակցությամբ: Ենթածրագրերի մշակման աշխատանքներում կներգրավվեն նաև շահագրգիռ հասարակական կազմակերպությունները:

2. Համաձայն «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ ՓՄՁ-ի զարգացման տարեկան ծրագրերի ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, որն արտացոլվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում առանձին տողով:

3. Հայաստանում ՓՄՁ-ի զարգացման 2002 թվականի պետական ծրագրի իրականացման միջոցառումները (ցանկը կցվում է) մշակում և համակարգում է Հայաստանի Հանրապետության արդյունաբերության և առևտրի նախարարությունը:

4. 2002 թվականի ընթացքում միջազգային դոնոր կազմակերպությունների հետ ձեռք բերված համաձայնությունների շրջանակներում կարող են իրականացվել ՓՄՁ-ի աջակցման համատեղ ծրագրեր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ց Ա Ն Կ
ՓՄՁ-ի զարգացման 2002 թվականի պետական ծրագրի իրականացման միջոցառումների

NN	Միջոցառումը	Կատարողը	Կատարման ժամկետը
1.	Իրավաբանական անձի կարգավիճակով, որպես ոչ առևտրային կազմակերպություն «ՓՄՁ-ի զարգացման ազգային կենտրոնի» հիմնադրում: Կենտրոնի 2002թ. աշխատանքների կազմակերպում	ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	2002թ. հունվար
2.	ՓՄՁ-ի զարգացմանը նպաստող իրավական ակտերի ընդունում	ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն, ՀՀ շահագրգիռ նախարարություններ և գերատեսչություններ	2002թ.
3.	ՓՄՁ-ի սուբյեկտների վիճակագրության վարման նախապատրաստում	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (համաձայնությամբ)	2002թ. I կիսամյակ
4.	ՓՄՁ-ին աջակցող և ծառայություններ մատուցող կազմակերպությունների ու ծրագրերի տեղեկագրի հրատարակում	ՓՄՁ-ի զարգացման ազգային կենտրոն	2002թ. II եռամսյակ
5.	ՓՄՁ-ի սուբյեկտներին խորհրդատվական, տեղեկատվական և մարկետինգային ծառայությունների տրամադրում, ներքին և արտաքին շուկաներում ապրանքների և ծառայությունների իրացմանն աջակցություն	ՓՄՁ-ի զարգացման ազգային կենտրոն	2002թ.
6.	Տեղեկատվական համակարգերին ՓՄՁ-ի ոլորտի ինտեգրացման աշխատանքների իրականացում	ՓՄՁ-ի զարգացման ազգային կենտրոն	2002թ.
7.	ՓՄՁ-ի զարգացման ծրագրերի մշակում՝ միջազգային դոնորներին ներկայացնելու համար	ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն, ՀՀ շահագիգիռ նախարարություններ և գերատեսչություններ, ՓՄՁ-ի զարգացման ազգային կենտրոն	2002թ.
8.	Միջազգային կազմակերպությունների հետ ՓՄՁ-ի զարգացման համատեղ ծրագրերի մշակում և իրականացում	ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն, ՓՄՁ-ի զարգացման ազգային կենտրոն	2002թ.